«ԱՇԽԱՏՈՒԺ» ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՏՓԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Աշխատուժի տնտեսագիտական (մասնավորապես քաղաքատնտեսական) կատեգորիա լինելու վերաբերյալ սովետական հետազոտողները տարբեր տեսակետներ են հայտնել։ Դրանք համառոտակի կարելի է հանգեցնել 3 խմբի. 1) աշխատուժն ինքնին տնտեսագիտական կատեգորիա չէ, 2) աշխատուժի տնտեսագիտական կատեգորիա լինել կամ չլինելը պայմանավորված է արտադրության միջոցների հետ նրա միացման բնույթով, 3) աշխատուժը տնտեսագիտական կատեգորիա է բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում։

Առաջին տեսակետը պաշտպանում է, օրինակ, Ն. Կոլեսովը, գրելով. «աշխատուժը կամ աշխատանքի նկատմամբ մարդու ֆիզիկական ու հոգևոր ընդունակությունների ամբողջությունը միշտ ունի որոշակի հասարակական ձև։ Սակայն աշխատուժն ինքնին տնտեսագիտական կատեգորիա չէ, այլ նման կատեգորիա են աշխատուժի նկատմամբ եղած հարաբերություններըս»[1]։

Երկրորդ տեսակետն են պաշտպանում Ա. Բուտենկոն, Վ. Սեմենենկոն և Ն. Տյապկինը, թեև նրանց կարծիքներն ունեն որոշ տարբերություններ։ Այսպես, Ա. Բուտենկոն և Վ. Սեմենենկոն[2] ենթադրում են, որ աշխատուժը տընտեսագիտական կատեգորիայի որոշակիություն է ձեռք բերում միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում. ա) արտադրողը տշխատուժի սեփականատերն է, և այս կամ այն չափով նրանից է կախված հասարակական արտադրության համակարգում իր աշխատանքի կիրառման տեղի ընտրությունը, բ) արտադրողը անմիջականորեն կապված չէ արտադրության միջոցների հետ՝ անկախ այն բանից, թե ո՞ւմ սեփականությունն են կազմում վերջիններս։ Հիշյալ հեղինակների կարծիքով աշխատուժը տնտեսագիտական կատեգորիա է միայն կապիտալիզմի և սոցիալիզմի ժամանակ, որոնք ինչպես ենթադրվում է, բավարարում են վերը բերված երկու պայմաններին։

Ի տարբերություն նախորդ երկու հեղինակների, Ն. Տյապկինը գտնում է, որ աշխատուժը տնտեսագիտական կատեգորիա է միայն կապիտալիզմի ժամանակ։ Ընդունելով, որ աշխատուժի, որպես տնտեսագիտական կատե-

---

[1] Н. Д. Колесов, Рабочая сила в системе экономических отношений социализма («Вопросы экономики», 1973, № 7, с. 85).

[2] А. М. Бутенко, Воспроизводство квалифицированной рабочей силы в сельском хозяйстве, М., 1970, с. 48; В. В. Семененко, Экономическая природа рабочей силы при социализме («Вестник Московского государственного университета», серия VII, «Экономика», 1967, № 4, с. 39—40).

գորիայի, որոշիչ հատկանիշը նրա առանձնացումն է իր տիրոջից՝ արտադրության միջոցների սեփականատիրոջը այն վաճառելու միջոցով, նա դրում է. «... սոցիալիստական հասարակարգում չկա և չի կարող լինել այնպիսի տնտեսագիտական հասկացություն, ինչպիսին է աշխատուժը»[3]։ Մեր կարծիքով, այս դրույթի հիմնական սխալը սոցիալիստական հասարակարգում մարդկային գործունեության կարևորագույն կողմի՝ աշխատանքային գործունեության, անտեսումն է։ Դա տեղի է ունենում կապիտալիստական ֆորմացիայում աշխատուժի վերարտադրության տնտեսական ձևի բացարձակացման հետևանքով։ Արդյունքը լինում է այն, որ սոցիալիզմի ժամանակ աշխատուժի վերարտադրության պրոբլեմը վերանում է[4]։

Այդուհանդերձ, այս դրույթը ռացիոնալ հատիկ է պարունակում աշխատուժ տնտեսագիտական կատեգորիայի պատմական սահմանների վերաբերյալ։ Վերլուծության այդ կողմը, սակայն, մասնագիտական գրականության մեջ պատշաճ ուշադրության չի արժանացել։ Մինչդեռ, սոցիալիզմի ժամանակ «աշխատուժ» տնտեսագիտական կատեգորիայի պատմական տենդենցի հարցը մեծ նշանակություն ունի ամբողջ հասարակական արտադրության վերլուծման համար։

Երրորդ տեսակետը (Բ. Ցիպին, Ի. Օբլոմսկայա և ուրիշներ)[5] մեր կարծիքով առավել հիմնավորված է։ Ինչպես հայտնի է, Կ. Մարքսը, առանձնացնելով «աշխատուժ» կատեգորիան, ցույց տվեց աշխատուժի և աշխատանքի՝ որպես աշխատուժի կիրառման պրոցեսի տարբերությունը, աշխատուժ դիտելով «... ֆիզիկական և հոգևոր այն ընդունակությունների ամբողջությունը, որ ունի մարդու օրգանիզմը, նրա կենդանի անձնավորությունը, և որ նա գործադրում է ամեն անգամ, երբ որևէ սպառողական արժեք է արտադրում»[6]։ Այս իմաստով աշխատուժը արտադրողական ուժերի և հասարակական արտադրության այնպիսի «հավիտենական» տարր է, ինչպիսին են արտադրության միջոցները։ Աշխատուժը արտադրության անհրաժեշտ պայման է ցանկացած հասարակության մեջ[7]։

Այն պնդումները, թե աշխատուժը որպես մարդու ֆիզիկական և հոգևոր ընդունակությունների ամբողջություն չի կարող տնտեսագիտական կատեգորիա լինել, հիմնված են աշխատուժի կենսաբանական, ֆիզիոլոգիական դիտարկումը տնտեսագիտականի հետ շփոթելու վրա։ Իսկ այն հանգամանքը, որ մարդու ֆիզիկական և հոգևոր ընդունակություններն իրենց բնական-

---

[3] П. П. Литвяков, Н. К. Тяпкин, Общественный труд и его производительность, М., 1961, с. 11, տե՛ս նաև Н. К. Тяпкин, О рабочей силе при социализме («Вопросы экономики», 1969, № 5, с. 105).

[4] Նշված դրույթը երբեմն քննադատվում է միակողմանի ու պարզեցված ձևով։ Տես, օրինակ, В. Е. Аперьян. Воспроизводство и трудовые ресурсы в социалистических странах, М., 1976, с. 24; Р. А. Нугаев, Совокупная рабочая сила и закономерности ее развития, Казань, 1975, с. 44.

[5] Б. Л. Шыпин, Рабочая сила и ее особенности в период развитого социалистического общества, М., 1978, с. 16; И. Я. Обломская, Система личных материальных стимулов при социализме, М., 1972, с. 49; «Социально-экономические проблемы использования рабочей силы», М., 1973, с. 10—11 и др.

[6] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 178։

[7] «Архив К. Маркса и Ф. Энгельса», т. II (VII), М., 1933, с. 15; К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, с. 43—44.

կենսաբանական որոշակիությամբ դառնում են բնական գիտությունների հետազոտության առարկա, ամենևին էլ չի նշանակում, թե «աշխատուժ» կատեգորիան զրկվում է տնտեսագիտական իմաստից և չի կարող ուսումնասիրվել տնտեսական գիտությունների, մասնավորապես քաղաքատնտեսության կողմից։ Իրականում աշխատուժ կատեգորիան ունի երկու կողմ. կենսաբանական՝ որպես կենդանի անհատի ընդունակություն և սոցիալ-տնտեսական՝ որպես արտադրության պրոցեսի սուբյեկտիվ գործոն։

Հասարակական աշխատանքի պրոցեսում կիրառվում է աշխատանքի այնպիսի ունակություններ, որը ձևավորվում է որոշակի հասարակական-տնտեսական գործոնների ազդեցության պայմաններում։ Որպեսզի արտադրության պրոցեսում իրացնի իրեն, աշխատուժը պետք է օժտված լինի հասարակության պահանջմունքներին և արտադրության զարգացման մակարդակին համապատասխանող որոշակի սպառողական արժեքով։ Բացի այդ, աշխատուժի սպառողական արժեքը ձևավորվում է հասարակության արտադրության միջոցների զարգացման մակարդակի ազդեցության տակ։ Վերջիններս աշխատուժի և նրա սպառողական արժեքի որակական կատարելագործման նյութական հիմք են։ Ասվածից կարելի է եզրակացնել, որ աշխատուժը մարդու բնածին հատկությունը չէ, չնայած նրանում կան ֆիզիկական և մտավոր օժտվածության որոշակի տարրեր։ Այն մարդկային հասարակության պատմական զարգացման արդյունք է, որը ձևավորվում է մարդուն ի ծնե տրված բնական, ֆիզիկական և մտավոր ընդունակությունների հիման վրա։ Սակայն այն նույնական չէ այդ ընդունակություններին, այլ հասարակական հարաբերությունների որոշակի դումար արտացոլող բաղաքատնտեսական կատեգորիա է։ Միևնույն ժամանակ, հասարակական արտադրության պրոցես ընդգրկված աշխատուժը միշտ ունի կոնկրետ սոցիալ-տնտեսական ձև։ Կապիտալիզմի ժամանակ աշխատուժի նման ձև է աշխատուժապրանքը, երբ աշխատուժը օբյեկտիվ հանգամանքների բերումով անհրաժեշտորեն վերածվում է ապրանքի։ Սակայն ապրանք դառնալը չի կազմում աշխատանքի պրոցեսի պայման հանդիսացող աշխատուժի բովանդակությունը։

Սոցիալիզմի ժամանակ անհատական աշխատուժը հանդես է գալիս որպես ասոցիացված արտադրողի աշխատուժ։ Այստեղ աշխատուժի միացումը արտադրության միջոցների հետ տեղի է ունենում արտադրության միջոցների հանրային սեփականության հիման վրա, որն էլ աշխատանքի համոնդհանրության սոցիալ-տնտեսական հիմքն է։ Սոցիալիզմը կարելի է բնորոշել որպես «... ազատ մարդկանց մի միություն, որոնք աշխատում են արտադրության հանրային միջոցներով և իրենց բազում անհատական աշխատուժերն ինքնագիտակցաբար ծախսում են որպես մի հասարակական աշխատուժ»[8]։ Սրանով իսկ սոցիալիզմի քաղաքատնտեսության կատեգորիա

[8] «Marx, Engels, Werke». Bd. 23, Berlin, 1974, s. 92. Բնագրին դիմելն ինքնանպատակ չէ։ Բանն այն է, որ «Կապիտալ» այս հատվածի ռուսերեն թարգմանության մեջ selbstbewu՝ «ինքնագիտակցարար», «ինքնագիտակցորեն» բառը թարգմանվել է «պլանալափորեն», իսկ փակագծում տրվել նաև գերմաներենը, չհաշված այն, որ բաց է թողնված viel «շատ», «բազում» բառը (К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, с. 88)։ «Կապիտալ» ռուսերենից կատարված հայերեն թարգմանության մեջ բաց է թողնված նաև փակագծում նշված selbstbewußt բառը։ Դրա հետևանքով «ինքնագիտակցարար», «ինքնագիտակցորեն» բառը

է հանդիսանում սոցիալիստական հասարակության աշխատավորի աշխատուժն իր սոցիալ-տնտեսական որոշակիությամբ՝ որպես արտադրության պրոցեսի իրական և գործողության մեջ գտնվող գործոն։ Աշխատուժը սոցիալիզմի ժամանակ չանջատված արտադրողի ֆիզիկական և հոգևոր ընդունակությունների ամբողջություն է, որն արտադրության միջոցների հանրային սեփականության հիման վրա նա ինքնագիտակցաբար գործադրում է հասարակության անհրաժեշտ սպառողական արժեքներ ստեղծելու համար։

Արտադրության միջոցների հետ աշխատողի անմիջական միացումը, բազիսային մակարդակում վերջինիս վերածումը արտադրության սուբյեկտի, մեր կարծիքով, բովանդակությունից զրկում է կապիտալիստական արտադրության այնպիսի առանձնահատուկ հասկացություններ, ինչպիսիք են աշխատուժի օտարումը և աշխատուժի ապրանքային ձևը։ Սոցիալիզմի ժամանակ աշխատուժի ապրանքային բնույթի վերաբերյալ ուղղակի պնդումները հազվադեպ են։ Որպես կանոն, դրանք պարուրված են սոցիալիզմի ժամանակ ապրանքային հարաբերությունների բնույթի, համատեղ աշխատանքում անհատի ընդգրկման, ըստ աշխատանքի վճարման ձևերի և այլնի վերաբերյալ դատողություններով։ Աշխատուժի ապրանքային ձևի վերաբերյալ արտահայտված կարծիքներն իրավացիորեն քննադատվել են սովետական տնտեսագիտական գրականության մեջ։ Մի շարք հեղինակներ էլ հանդես են եկել իրենց տեսակետների քննադատական վերանայմամբ։ Ուստի, բավարարվենք միայն այդ քննադատության հետևյալ երեք մոմենտներով։ 1) Նախ, աշխատուժի ապրանքային ձևը Կ. Մարքսը կապում էր ոչ թե ապրանքային հարաբերությունների, այլ կապիտալիզմի հետ, որպես ապրանքային արտադրության համընդհանուր ձևի։ Կոմունիստական արտադրությունը, հանդես գալով որպես կապիտալիստականի բացասում, իր բուն էությամբ ապրանքային չէ, հետևաբար և չի ստեղծում այնպիսի միջավայր, որպիսին անհրաժեշտ է աշխատուժ ապրանքի համար։ Սոցիալիզմի փուլում պահպանված ապրանքադրամական հարաբերությունները չեն խախտում հիմնական արտադրական հարաբերության բովանդակությունը։ 2) Ծախսված աշխատանքի մի մասի արդյունքի հետ փոխանակման համարժեքությունը աշխատուժի փոխանակում չէ։ Սոցիալիզմի ժամանակ ըստ աշխատանքի բաշխումը տեղի չի ունենում Ա—Փ—Ա բանաձևով։ Փոխանակման համարժեքությունն այդ դեպքում թույլատրելի է արտաարժեքային ձևերում, ինչպես դա նկարագրել է Կ. Մարքսը՝ «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ[9]։ Աշխատանքի քանակին և որակին համապատասխան արդյունքի բաշխման հարաբերություններում համարժեքության սկզբունքը պատմականորեն անցողիկ բնույթ ունի կոմունիստական ֆորմացիայի առաջին փուլի սահմաններում։ 3) Ապրանքադրամական հարաբերությունների պահպանումը սոցիալիզմի ժամանակ հանգեցնում է այն բանին, որ կենսամիջոցների ֆոնդը ձեռք է բերում ապրանքային ձև։ Սակայն վերջինս կապված չէ աշխատուժի ապրանքային ձևի հետ։ Կենսամի-

---

տտացել է «պյանաչափորեն» իմաստը (Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 86)։ Մինչդեռ, Բ. Ավդալբեգյանի՝ գերմաներենից կատարած թարգմանության մեջ այդ բառը թարգմանված է «ինքնագիտակցորեն» (Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 47)։

9 Կ. Մ ա ր ք ս և Ֆ. Է ն գ ե լ ս, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1978, էջ 15։

ջոցների ֆոնդի արժեքը բնութագրում է անձնական սպառման մեջ մտնող արգյունքի արժեքը, այլ ոչ թե աշխատուժը։ Նտրագրվածից հետևում է, որ ներկայումս հետազոտողների մեծ մասն ընդունում է «աշխատուժ» կատեգորիայի գոյությունը սոցիալիզմի ժամանակ, միաժամանակ մերժելով նրա ապրանքային ձևը։ Սակայն շատ ավելի դժվար է միասնական կարծիքի հանգել այն տնտեսական հարաբերությունների վերաբերյալ, որ այդ կատեգորիան արտահայտում է։ Մասնավորապես սոցիալիզմի ժամանակ աշխատուժի նկատմամբ սեփականության վերաբերյալ սովետական տնտեսագիտական գրականության մեջ աշխույժ բանավեճեր են մղվում, որոնց մասնակիցները արտահայտում են տարբեր տեսակետներ։ Սոցիալիզմի ժամանակ աշխատուժի նկատմամբ սեփականության վերաբերյալ բանավեճը երբեմն համարում են սխոլաստիկ՝ պատճառաբանելով, որ այն էական ոչինչ չի տալիս աշխատուժի վերարտադրության առանձնահատկություններն ուսումնասիրելու համար։ Սակայն սոցիալիզմի ժամանակ աշխատուժի վերաբերյալ ձևավորված բազմազան արտադրական հարաբերությունների ամբողջությունից, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել երկու փոխադարձաբար կապված հարաբերությունների խմբեր, որոնցից առաջինն ընդգրկում է աշխատուժի՝ արտադրության միջոցների հետ միացման հարաբերությունները, ներառյալ նաև աշխատուժի նկատմամբ սեփականության հարաբերությունները, երկրորդը՝ աշխատուժի շարժման, այսինքն՝ նրա վերարտադրության հետ կապված հարաբերությունները։ Դրանց առաջին խումբը պայմանավորում է երկրորդը։ Ուստի, սոցիալիզմի ժամանակ աշխատուժի վերարտադրության առանձնահատկությունները պարզաբանելու համար անհրաժեշտ է քննել հարաբերությունների առաջին խումբը, այսինքն՝ արտադրության միջոցների հետ աշխատուժի միացման առանձնահատկությունները և աշխատուժի նկատմամբ սեփականության հարաբերությունները։

Ինչպես հայտնի է, արտադրության միջոցները սոցիալիզմի ժամանակ հանրային սեփականություն են։ Ինչ վերաբերում է սոցիալիզմի ժամանակ աշխատուժի սեփականության հարցին, ապա այդ առթիվ սովետական տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն բազմազան կարծիքներ, որոնցից կարելի է նշել հետևյալները. 1) աշխատուժը սոցիալիզմի ժամանակ աշխատավորների անձնական սեփականությունն է[11]. 2) այն կարող է լինել կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականություն.[12] 3) աշխատուժը կոլեկտիվ սեփականություն է պետական սեկտորի ներսում[13],

---

[10] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, с. 43–44.

[11] Այս կարծիքին են. օրինակ՝ Վ. Կարպենկոն, Ե. Վինոգրադովը. Ն. Միֆտախովը. Կ. Տրանովը, Ա. Օրդուխանովը և ուրիշներ («Социально-экономические проблемы рабочей силы при социализме», Л., 1972, с. 24. 25–28, 37, 39, 53; «Рабочая сила в системе социалистических производственных отношений», Ярославль, 1973, с. 47–50; «Стоимость рабочей силы при социализме», Ташкент, 1968. с. 72; «Воспроизводство рабочей силы в странах мировой социалистической системы», М., 1970, с. 66. «Население и трудовые ресурсы СССР», М., 1971, с. 43 и др.)։

[12] В. В. Королев, К вопросу о собственности на рабочую силу при социализме («Рабочая сила в системе социалистических производственных отношений», Ярославль, 1973, с. 20—22).

[13] «В. И. Ленин об экономических проблемах научно-технического прогресса в СССР», М., 1972, с. 207.

4) աշխատուժը համաժողովրդական սեփականություն է,[14] 5) սեփականությունը աշխատուժի նկատմամբ միաժամանակ և՝ համաժողովրդական է, և՝ անձնական[15], 6) անհատական աշխատուժը սոցիալիզմի ժամանակ սեփականության հարաբերությունների օբյեկտ չէ[16], 7) սոցիալիզմի պայմաններում ընդհանրապես «բացակայում են հարաբերությունները աշխատուժի յուրացման վերաբերյալ»[17]։

Սովետական տնտեսագիտական գրականության մեջ, թեև հազվադեպ, սակայն հանդիպում են նաև թվարկված տեսակետների դանդաղ համակցություններ, ներառյալ նաև աշխատուժի ընտանեկան սեփականության ձևը[18]։ Սակայն որքան էլ բազմազան լինեն աշխատուժի նկատմամբ սեփականության վերաբերյալ եղած կարծիքները, մեզ թվում է, որ դրանք, այնուամենայնիվ, կարելի է ներկայացնել իբրև երկու փոխբացառող տեսակետներ. ա) սոցիալիզմի ժամանակ աշխատուժը սեփականության օբյեկտ է, բ) աշխատուժը սոցիալիզմի ժամանակ սեփականության օբյեկտ չէ։ Մենք համամիտ ենք բ) տեսակետի հետ, իսկ ավելի կոնկրետ՝ վերոհիշյալ 6-րդ ըմբռնման հետ։ Աշխատուժն իրոք չի կարող սեփականության հարաբերությունների օբյեկտ լինել, որովհետև այն այդ հարաբերությունների միակ սուբյեկտն է։ Հարկ է նշել նաև, որ յուրացման պրոցեսի շրջանակներում արտադրվող աշխատուժն ամենևին էլ չի կարելի բառիս բուն իմաստով աշխատուժ անվանել։ Այստեղ նա միայն աշխատանքի առարկա է, որը ենթարկվում է հասարակության արդեն գործող աշխատուժի ազդեցությանը և որը դեռ պետք է պատրաստի արտադրանք դառնա իրական աշխատուժի տեսքով։ Հենց այս և միայն այս առումով կարելի է խոսել աշխատուժի յուրացման մասին, ուստի վերոհիշյալ 7-րդ ըմբռնումը նույնպես չի կարելի հիմնավորված համարել։

Աշխատուժի բովանդակության ավելի խորը ըմբռնման համար միաժամանակ անհրաժեշտ է քննադատաբար մոտենալ ա տեսակետի բովանդակություն կազմող վերոհիշյալ 1—5 ըմբռնումներից մի քանիսին։ 1-ին ըմ-

---

[14] Այս կարծիքին են, օրինակ, Ս. Երեմինը, Յա. Կրոնրոդը, Վ. Միններ, Ի. Մուսատովը, Ս. Կովրիգինը, Ս. Ռոգինը և ուրիշներ («Вопросы экономики», 1970, № 1, с. 95; «Экономические науки», 1968, № 11, с. 31; Я. А. Кронрод, Законы политической экономии социализма, М., 1966, с. 44, 397, 399; «Предприятие в системе народного хозяйства», М., 1972, с. 133; «Экономические проблемы развитого социализма и современного капитализма», М., 1976, с. 13; «Социально-экономические проблемы рабочей силы при социализме», с. 33, 57, 72—73 и др.).

[15] Նման կարծիքի են Մ. Կուկուշկինը, Վ. Լոսկուտովը, Ա. Մուրավյովը և ուրիշներ («Социально-экономические проблемы рабочей силы при социализме», с. 9—11, 53, «Рабочая сила в системе социалистических производственных отношений», с. 19—23, 80 и др.).

[16] Այս կարծիքին են Յու. Բժիլյանսկին, Ն. Կոլեսովը, Մ. Պլիները, Ռ. Նուգաևը, Պ. Պավլովը, Զ. Գրիգորեան, Բ. Ցիպինը, Վ. Ապերյանը, Ի. Յագոդկինան և ուրիշներ («Вопросы экономики», 1973, № 7, с. 88; Р. А. Нугаев, Совокупная рабочая сила и закономерности ее развития, с. 99, 106, 107; Б. Л. Цыпин, Рабочая сила и ее особенности в период развитого социалистического общества, с. 41; В. Е. Аперьян, նշվ. աշխ., էջ 21; И. А. Ягодкина, Воспроизводство рабочей силы при социализме, М., 1979, с. 23 и др.).

[17] И. Сорокина О категории рабочей силы при социализме («Вопросы экономики», 1974, № 3, с. 78).

[18] «Социально-экономические проблемы рабочей силы при социализме», с. 53.

ռման կողմնակիցների մեծ մասը դատում է հետևյալ կերպ. կոմունիզմը վերացնում է ոչ թե սեփականությունն ընդհանրապես (այդ թվում՝ նաև աշխատուժի սեփականությունը), այլ նրա մասնավոր ձևը։ Քանի որ աշխատուժի սեփականատերը հասարակությունը չէ, ապա այն ակնհայտորեն աշխատավորների անձնական սեփականությունն է[19]։ Ելակետ ընդունելով աշխատուժի անձնական սեփականությունը, այս ըմբռման կողմնակիցներն ընդհուպ մոտենում են սոցիալիզմի ժամանակ աշխատուժի ապրանքային ձևի ընդունմանը[20]։ Պատահական չէ, որ այն տնտեսագետները, որոնք ընդունում են աշխատուժի արժեքային, ապրանքային կամ կիսաապրանքային ձևերը, աշխատուժը համարում են աշխատավորի անձնական սեփականություն։ Դրանով իսկ նրանք կամա թե ակամա ժխտում են այն փաստը, որ արտադրության միջոցների հասարակական սեփականության շնորհիվ սոցիալիզմի ժամանակ վերանում է անմիջական արտադրողի առանձնացումը արտադրության միջոցներից, մի բան, որ բնորոշ է կապիտալիզմին։

Աշխատուժը համաժողովրդական սեփականություն դիտողները, ըստ էության, նույնացնում են աշխատուժի և արտադրության միջոցների նկատմամբ եղած հարաբերությունները։ «Ցանկացած արտադրության մեջ,— գրում է Վ. Կորոլյովը,— սեփականությունը գործող աշխատուժի նկատմամբ այնպիսին է, ինչպիսին արտադրության միջոցների սեփականությունն է»[21]։ Սակայն արտադրության միջոցների հանրային սեփականության վրա հիմնված աշխատանքի անմիջական հասարակական բնույթը և առանձին անհատների անբաժանելի հատկությունը կազմող աշխատուժի անմիջական հասարակական բնույթը բոլորովին տարբեր բաներ են։ Սեփականությունը որպես հասարակական հարաբերություն չի կարելի կտրել նրա սուբստանցիոնալ հիմքից և նյութական բովանդակությունից։ Ուստի սեփականությունը որպես յուրացման պատմականորեն որոշակի հասարակական ձև անպայմանորեն ենթադրում է յուրացման օբյեկտ։

Ինչպես նկատել է Ս. Կոլեսովը, «աշխատուժը հասարակական սեփականություն համարելը ըստ էության նշանակում է, որ այն անջատվում է մարդուց, անհատից»[22]։ Բայց նման անջատումը ակնհայտորեն ճիշտ չէ։ Իրականում սոցիալիզմի ժամանակ որպես ասոցիացիայի անդամ է հանդես գալիս ոչ թե աշխատուժը, այլ մարդը, անհատը։ Այդ դեպքում աշխատուժը ոչ թե առանձնանում է իր կրողից, այլ հանդես է գալիս որպես նրա անհատականության էական հատկանիշ։

Աշխատուժը համաժողովրդական սեփականություն դիտողները որպես կանոն մերժում են աշխատուժի ապրանքային ձևը սոցիալիզմի ժամանակ։ Այդ բանը նրանք հիմնավորում են նրանով, որ սոցիալիզմի ժամանակ աշխատուժը լինելով համաժողովրդական սեփականություն, փոխում է արտադրության միջոցների հետ աշխատուժի միացման բնույթը, տալով նրան անմիջականորեն հասարակական բնույթ և դրանով իսկ բացառում է աշ-

---

19 «Население и трудовые ресурсы СССР», с. 43.

20 «Вопросы экономики», 1974, № 3, с. 71.

21 В. В. Королев. К вопросу о собственности на рабочую силу при социализме («Рабочая сила в системе социалистических производственных отношений», с. 20).

22 «Вопросы экономики», 1973, № 7, с. 88.

խատուժի՝ որպես ապրանքի հանդես գալը[23]։ Համաձայն լինելով նրանց վերջնական ենթադրության հետ, մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն հիմնավորելու համար կարիք չկար աշխատուժը դիտել որպես համաժողովրդական սեփականություն։ Արտադրության միջոցների հասարակական սեփականությունը միանգամայն բավարար պայման է, որպեսզի վերջինիս հետ աշխատուժի միացումը անմիջականորեն հասարակական բնույթ կրի։

Աշխատուժի նկատմամբ սեփականության հաջորդ ըմբռնումը առավել հստակ արտահայտում է Մ. Կուկուշկինը։ Նա գրում է. «Իրականում սոցիալիզմի ժամանակ աշխատուժը ոչ միայն առանձին անհատի, այլև ողջ հասարակության ունեցվածքն է։ Ընդսմին, հասարակության դերը աշխատուժի և նրա կրողի ձևավորման գործում սոցիալիզմի զարգացման հետ մեկտեղ ավելի է մեծանում»[24]։ Այսպիսով, այս ըմբռնման կողմնակիցներն աշխատուժի նկատմամբ անձնական և հասարակական սեփականության միաժամանակյա առկայությունը կապում են անհատական աշխատուժի ձևավորման գործում հասարակության (բնականաբար նաև անհատի) մասնակցության իր բաժինն ունենալու հետ։ Սակայն աշխատուժի ձևավորումը նյութական և կուլտուրական բարիքների սպառում է մարդու կողմից։ Մինչդեռ, սեփականության հարաբերությունները նյութական և կուլտուրական բարիքների բաշխման և սպառման բնույթից բխեցնելը մեթոդոլոգիապես ճիշտ չէ, ինչպես ճիշտ չէ նաև սեփականության հարաբերություններում որակական տեղաշարժերը կապել աշխատուժի վերարտադրությունն ապահովող անհատական և հասարակական սպառման ֆոնդերի միջև եղած քանակական համամասնությունների հետ։ Այն հանգամանքը, որ աշխատուժի ձևավորման գործում հասարակության դերը սոցիալիզմի և նրան համապատասխանող արտադրական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ մեծանում է, բացատրվում է արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության հաստատմամբ և անմիջական արտադրողներին արտադրության միջոցներից առանձնացման վերացմամբ։

Աշխատուժն անձնական սեփականություն ընդունելը, ինչպես արդեն ցույց տրվեց վերը, անուղղակիորեն հանգեցնում է սոցիալիզմի ժամանակ աշխատուժը որպես ապրանք ընդունելուն։ Ըստ երևույթին, հաշվի առնելով այս և նկատի ունենալով, որ աշխատուժի անձնական սեփականության ընդունումը իր էությամբ հակասության մեջ է մտնում արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության առկայության հետ, Մ. Կուկուշկինը նախ նշում է, որ աշխատուժն իր կրողի սեփականությունն է միայն կիսով չափ (մյուս մասը պատկանում է հասարակությանը) և ապա՝ իր դատողություններում մտցնում է այսպիսի վերապահում. «քանի որ սոցիալիզմի ժամանակ աշխատուժի առաջատար և որոշիչ հատկանիշը նրա հասարակական սեփականությունն է, ուստի այն ապրանք չէ»[25], այսինքն՝ աշխատուժը նման իրավիճակում կարող էր և ապրանք լինել, սակայն հասարակական սեփականությունը «գերազանցում է», որի հետևանքով և աշ-

[23] Я. А. Кронрод. Законы политической экономии социализма, с. 44; В. Минеев. Особенности соединения рабочей силы со средствами производства при социализме («Экономические науки», 1968, № 11, с. 30—32) и др.

[24] «Народный доход», Л., 1965, с. 11.

[25] «Социально-экономические проблемы рабочей силы при социализме», с. 9.

խատուժն ապրանք չէ։ Դատելով այսպես, նա եզրակացնում է, որ «սոցիալիզմի ժամանակ իր սոցիալ-տնտեսական ձևով աշխատուժը երկակի է»[26]։ Մ. Կուկուշկինին հակառակ, Վ. Լոսկուտովը գտնում է, որ «... աշխատուժը հասարակության և ընտանիքի համատեղ սեփականություն է. ընդ որում, առավել մեծ դեր է խաղում աշխատուժի ընտանեկան սեփականությունը»[27]։ Աշխատուժի երկակիության ընդունումը ըստ էության նշանակում է, որ սոցիալիզմի ժամանակ այն եթե ոչ ամբողջությամբ, համենայն դեպս կիսով չափ ապրանք է։ Այսպես, Բ. Մինցը նույնպես հանգում է սոցիալիզմի ժամանակ աշխատուժի երկակի բնույթի վերաբերյալ հետևությանը և ուղղակի գրում, որ սոցիալիզմի ժամանակ աշխատուժը պարունակում է «ապրանքի տարրերի որոշակի մնացորդներ, որոնք կարելի է սահմանել որպես վարձու աշխատանքի տարրեր»[28]։

Աշխատուժի սեփականության նման ձևի ընդունումը, ինչպես նրա անձնական սեփականության դեպքում, անհրաժեշտորեն տանում է վերջինիս ապրանքային ձևի ընդունմանը։ Ուստի, աշխատուժի անձնական սեփականության վերաբերյալ եղած քննադատությունը համարյա միշտ կարելի է օգտագործել նրա սեփականության երկակի ձևը քննադատելիս։

Հարկ չհամարելով կանգ առնել ա տեսակետի մեջ մտնող մնացած երկու ըմբռնումների և ընդհանրապես դրանց հնարավոր համակցումների վրա, որոնց պաշտպանները համեմատաբար շատ չեն, նկատենք միայն, որ աշխատուժի նկատմամբ սեփականության ձևերի որոնումը կարելի է բացատրել նրանով, որ դա անբացահայտ տեսքով նաև այն հակասությունների որոնումն է, առանց որոնց անիմաստ է աշխատուժի շարժումը հասարակական արտադրության պայմաններում։ Թվում էր, թե աշխատուժի նկատմամբ սեփականությունը պետք է առավել հստակորեն դրսևորեր աշխատուժի երկակի գոյությունը, որպես անհատի և որպես հասարակության աշխատանքային պոտենցիալի։ Սակայն սոցիալիզմի ժամանակ աշխատուժի նկատմամբ սեփականության բացակայությունն ամենևին էլ համարժեք չէ աշխատուժի շարժման մեջ եղած հակասությունների բացառմանը։ Անհատական և հասարակական աշխատուժը օրգանական միասնություն են կազմում և հանդիսանում են նրա կողմերը։ Նրանց հակասական փոխազդեցությունը ինչպես անհատական, այնպես էլ հասարակական աշխատուժի համար հանդես է գալիս որպես զարգացման աղբյուր։ Սոցիալիզմի ժամանակ «աշխատուժ» տնտեսագիտական կատեգորիան արտահայտում է իր ֆիզիկական և հոգևոր ունակությունների նկատմամբ արտադրողի ազատ տնօրինման հարաբերությունը՝ հասարակական արտադրությունում նրա պլանաչափ ընդգրկման և օգտագործման վերաբերյալ։

Առանց աշխատուժի (որպես քաղաքատնտեսական կատեգորիայի) զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման անհնար է հասկանալ սոցիալիստական հասարակության և նրա՝ արտադրական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները։ Սոցիալիստական արտադրության զարգացման և նրա կոմունիստականի վերածման պրոբլեմի գիտական վեր-

---

[26] Նույն տեղում, էջ 9։
[27] Նույն տեղում, էջ 53։
[28] Б. Минц, Политическая экономия социализма, М., 1965, с. 351

լուծությունը պահանջում է «աշխատուժ» տնտեսագիտական կատեգորիայի բովանդակության և հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ մարդու, որպես աշխատուժի կրողի, համատեղ ուսումնասիրություն։ Նման ուսումնասիրությունն առավել անհրաժեշտ է զարգացած սոցիալիզմի պայմաններում, երբ գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով արտադրողական ուժերի բուռն զարգացումն ավելի ու ավելի մեծ ազդեցություն է թողնում արտադրական հարաբերությունների կատարելագործման վրա։ Ներկայումս ռացիոնալ տնտեսվարությունը և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների որոշումն անհնար են առանց աշխատուժի զարգացման օրինաչափությունների երկարատև ուսումնասիրության։

КАТЕГОРИЯ «РАБОЧАЯ СИЛА» И ЕЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ

СТЕПАН СИМОНЯН

Резюме

Для рассмотрения закономерностей воспроизводства рабочей силы при социализме необходимо подробно исследовать рабочую силу как категорию политической экономии и те отношения, которые складываются по поводу этой категории в социалистическом обществе. Достижение единства взглядов в толковании рабочей силы при социализме и соответствующих отношений, в частности, отношений собственности на рабочую силу, безусловно, способствует плодотворному изучению этой проблемы.

Рабочая сила при социализме не является объектом какой-либо формы собственности. Социально-экономическая природа рабочей силы определяется формой собственности на средства производства, то есть на общественные условия реализации рабочей силы в процессе производства. Труженики социалистического производства непосредственно соединены со средствами производства, поскольку являются их собственниками. Между отдельным тружеником и обществом не складываются отношения присвоения рабочей силы и распоряжения ею, а возникают отношения по поводу производства и использования рабочей силы с максимально возможным совпадением интересов общества и личности.